ԵՐԵՎԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0047,
Նորք, Ա.Արմենակյան փողոց, 108/4
Հեռախոս՝ (+37410) 650971, 650961
Ֆաքս՝ (+37410) 653809
Էլ.փոստ՝ norkmarashmc@gmail.com

"Nork-Marash" Medical Center
Armenakyan str. 108/4, Yerevan 0047, Armenia
Phone: (+37410) 650971, 650961
Fax: (+37410) 653809
E-mail: norkmarashmc@gmail.com

Медицинский Центр «Норк-Мараш»
РА, Ереван, 0047, ул. А.Арменакяна 108/4
Телефон: (+37410) 650971, 650961
Факс: (+37410) 653809
Эл.почта: norkmarashmc@gmail.com

N 08-282/25

«20» օգոստոսի 2025թ.

«ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ի տնօրեն
Մ. Աղաջանյանին
էլ. փոստ՝ arg.aj@mail.ru
094-277-400

Ծանուցում

(թիվ ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/62-6>> ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) միջև 02.06.2025 թվականին կնքվել է ապրանքի մատակարարման թիվ «ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/62-6» պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Ընթացակարգի հրավերի և Պայմանագրի պայմանների համաձայն Ապրանքները պետք է համապատասխանեն ՀՀ Կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ հաստատված պահանջներին, ընդ որում առաջարկվող Ապրանքը պետք է գրանցված լինի դեղերի պետական գրանցամատյանում:

10.06.2025 թվականին Ընկերությունը A 6893919869 հարկային հաշվով մատակարարել է 100 հատ <<Ֆրաքսիպարին>> դեղամիջոց, որը չի ընդունվել Պատվիրատուի կողմից: 16.06.2025 թվականին ընկերությանը գրությամբ ներկայացվել է բացասական եզրակացությունը և տրամադրվել է մատակարարած ապրանքը պայմանագրին համապատասխանող ապրանքով անհատույց փոխարինման համար ողջամիտ ժամկետ, այն է՝ 10.07.2025 թվականը ներառյալ:

27.06.2025 թվականին Ընկերությունը դիմել է Պատվիրատուին, հայտնելով որ մատակարարած ապրանքը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղամիջոց: Այդ տեղեկությանը հավաստիանալու նպատակով Պատվիրատուն 04.07.2025 թվականին դիմել է <<Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ին: Ստացված պատասխանով ապացուցվել է, որ Ընկերության կողմից մատակարաված դեղամիջոցը ունի փաթեթավորման անհամապատասխանություններ գրանցված դեղամիջոցի հետ: Արդյունքում Ընկերությունը 10.07.2025 թվականին հետ է տարել մատակարարված դեղամիջոցը:

17.07.2025 թվականին Ընկերությանը ներկայացվել է գրություն, որով սահմանվել է պայմանագրի պայմաններին համապատասխանող ապրանք մատակարարելու համար նոր, ողջամիտ ժամկետ՝ այն է 21.07.2025 թվականը ներառյալ:

18.07.2025 թվականին Ընկերությունը A 9999763165 հարկային հաշվով մատակարարել է 100 հատ <<Ֆրաքսիպարին>> դեղամիջոց, որը կրկին չի ընդունվել Պատվիրատուի կողմից: Հաշվի առնելով Մատակարարած ապրանքի վրա առկա փաթեթավորման և ներդիր թերթիկի փոփոխությունները և 22.07.2025 թվականին թիվ 08-229/25 գրությամբ Ընկերությունից պահանջվել է Պատվիրատուին ներկայացնել իրավասու մարմնի կողմից տրամադրված գրություն, որով կհիմնավորվի մատակարարված դեղամիջոցի որպես գրանցված դեղամիջոց իրացման իրավունքը: Նշված պահանջի հանդեպ Ընկերության կողմից ցուցաբերվել է անգործություն, ինչի արդյունքում Պատվիրատուն 01.08.2025 թվականին կրկին դիմել է <<Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ին:

08.08.2025 թվականին <<Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ը գրությամբ հիմնավորել է մատակարարված տվյալ դեղամիջոցի փաթեթավորման անհամապատասխանությունները գրանված դեղամիջոցի նկատմամբ: 11.08.2025 թվականին տվյալ հիմնավորումները ներկայացվել են Ընկերությանը և առաջարկվել է մինչև 14.08.2025թ. ներառյալ իրականացնել մատակարարված դեղորայքի տուփերի պատշաճ համապատասխանեցում սահմանված

պահանջներին: Արդյունքում Ընկերությունը երկրորդ անգամ հետ է տարել մատակարարված դեղամիջոցները, սակայն 20.08.2025 թվականի դրությամբ Պայմանագրին համապատասխանող ապրանք այդպես էլ չի մատակարարել:

Պայմանագրի համապատասխան կետերով սահմանված է հետևյալը.

<<2.1.Գնորդն իրավունք ունի.

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

...

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.>>

<<2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի>>

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:»:

Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Ելնելով վերոգրյալից՝ ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը էականորեն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, այն է՝ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն որոշեց **միակողմանի ամբողջությամբ հրաժարվել պայմանագրից՝** համարելով այն միակողմանի լուծված, իսկ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 8.11-րդ կետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող

հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը (1150001612200100 հաշվեհամարին), ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասնօրյա ժամկետը լրանալը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՏՆՕՐԵՆԻ Պ/Կ Կ. Է. ԽԱՉԻՅԱՆ

Կատ.
Գնումների բաժին
Հեռ. 010-650560